ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ*

Հայաստանի Հանրապետությունը վարում է զարգացման ազգային-սոցիալական շուկայական տնտեսության մոդելի վրա հիմնված նախահարձակ, հավակնոտ տնտեսական քաղաքականություն՝ միտված ներքին՝ մարդկային, բնական, նյութական, ֆինանսական և արտադրական ռեսուրսների բացահայտմանը և դրանց շնորհիվ ազգային մրցակցային առավելությունների, առաջին հերթին, տնտեսության գիտատար ճյուղերի ապրանքների և ծառայությունների առավել արդյունավետ իրացմանը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության նոր զարգացումներին ու միտումներին համահունչ՝ ներքին և արտաքին շուկաներում: Նպատակը իրական ժողովրդավարության կայացմամբ, սոցիալական արդարության հաստատմամբ, գործարար ոլորտում վստահության մթնոլորտի ձևավորմամբ, Սփյուռքի և Արցախի հայության մասնագիտական կարողության համակարգված մասնակցությամբ իրավական պետության, ազգաբնակչության արժանավայել կենսապայմանների, տնտեսական լիարժեք անվտանգության ապահովումն է:

Հիմնաբառեր. *դոկտրին, մոդել, քաղաքականություն, ռեսուրսներ, սոցիալական շուկայական տնտեսություն*
JEL: O1, O10, O2

Անկախության հռչակումից ի վեր Հայաստանն ակամայից հայտնվեց որակապես նոր աշխարհակարգում, ներքին ու արտաքին նոր միջավայրերում, նոր տնտեսավարման պայմաններում: Սպասելի և տրամաբանական

* Դոկտրին

էր նաև այն, որ նորանկախ երկիրը միանգամից իր վրա բևեռեց բոլոր միջազգային կառույցների ու միջազգային նոր տնտեսակարգը ներկայացնող պետությունների ուշադրությունը: Ավելին, դրանց գերակշիռ մասն անթաքույց փորձեր կատարեց Հայաստանին առաջարկելու (գործնականում՝ պարտադրելու) տնտեսական զարգացման գաղափարախոսությունը, որն ինքնուրույնների սկզբին արդեն իր բացարձակ և դասական ընկալմամբ որևէ երկրում չէր կիրառվում[1]: Հայաստանը ստիպված էր տպավորել արտաքին աշխարհին այն բարեփոխումներով, որոնց դիմաց ստացավ հեղինակավոր միջազգային կառույցների անդամակցություն, դրանցից մասնագիտական, տեխնիկական և նյութական աջակցություն:

Ինքնուրույնների վերջին վրա հասած Ասիական ճգնաժամը, իսկ ավելի ուշ՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, անտարակույս, խորհրդանշեցին նաև դասական ազատական գաղափարախոսության ճգնաժամը, որն, իր հերթին, սկիզբ դրեց տնտեսական զարգացման նոր մոդելների փնտրտուքի, ինչն ապարդյուն շարունակվում է մինչ օրս[2]: Փոխարենը՝ ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրները հրաժեշտ տվեցին զարգացման «իզմ»-երին և համընդհանուր անորոշության պայմաններում փորձում են ձևավորել սեփական ազգային տնտեսությունների շահերից բխող կառուցակարգեր և ռազմավարություն, որը, որոշակի դժվարություններով, ներդաշնակեցնում են տարածաշրջանայնացման և գլոբալացման արդի միտումներին:

Այս տեսանկյունից բոլորովին պատահական չէ Չինաստանի վերածումը համաշխարհային տնտեսության ուժի կենտրոններից մեկի, որի հիմքում ինչպես մրցակցային, ազատ շուկայական տնտեսության սկզբունքներն ու մոտեցումներն են, այնպես էլ քեյնսյան ընկալումները պետության դերի և մակրոտնտեսական կարգավորման վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ հնարավորություն է ընձեռված ազատվելու արտաքին և ներքին պարտադրանքներից և մշակելու տնտեսության զարգացման սեփական մոդելը, որն առավել համահունչ կլինի ոչ միայն ազգային շահերին, այլև համընդգրկուն մարտահրավերներին և հաշվի կառնի համաշխարհային տնտեսության զարգացման միտումներն ու զարգացումները:

Անկախության առաջին տարիներից մշտապես հորդորել ենք ուսումնասիրել հետպատերազմյան Գերմանիայում Լյուդվիգ Էրհարդի նախաձեռնած բարեփոխումների փորձը և վերջինիս կողմից մշակված սոցիալական շուկայական տնտեսության գաղափարախոսությունը[3], որը լուրջ դիմադրության է արժանացել «ուլտրաազատական» գաղափարախոսության ջահակիր Հայաստանի գրեթե բոլոր կառավարությունների կողմից: Այսուամենայնիվ, գաղափարակիցներիս հետ համատեղ տարված պայքարը տվեց իր բաղձալի արդյունքը: Հայաստանի Հանրապետության սահմանադրության բարեփոխված տարբերակի 11-րդ հոդվածում հստակ ամրագրված է երկրի տնտեսական կարգը. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սե-

---

[1] Տե՛ս Մարտահրավերներ գլոբալացմանը, Նորավանք, 19.05.2008: http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=755

[2] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ճգնաժամեր (պատճառներ և հետևանքներ). http://www.irates.am/hy/uzrSSFrGYFF3QdTaQiljLrbvSR

[3] Տե՛ս Lyudvig Erhard Prosperity for All 1957. 8th Edition: 1964, էջ 23–39:

փականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»[4]:

Հանրապետության տնտեսական նոր համակարգի ձևավորումը այլևս չի կարող կամայական բնույթ կրել: Անհրաժեշտ է պետության կողմից մշակված և փուլ առ փուլ իրականացվող տնտեսական քաղաքականություն: Վերջինս, իր հերթին, պետք է հիմնվի տնտեսության զարգացման հեռանկարային ծրագրի վրա, որը բխում է տնտեսական ռազմավարական հայեցակարգի դրույթներից և, առաջին հերթին՝ տնտեսական հայեցակետից: Տնտեսական հայեցակետի սահմանումը ժամանակի անհետաձգելի հրամայականն է, անկյունաքարը՝ տնտեսական բարեփոխումների և ընդհանրապես տնտեսական քաղաքականության:

Որպես գերխտացված ձևակերպում պետության տնտեսական քաղաքականության, ինչպես նաև գլխավոր միտումների և նպատակներին հասնելու ուղղությունների, տնտեսական հայեցակետին, մեր կարծիքով, պետք է նախորդեն ներածական հիմնավորումներ՝ առավել ըմբռնելի դարձնելու դրա բաղադրիչները և վերջնանպատակին հասնելու ընտրված ռազմավարությունը:

Նախ՝ տնտեսական քաղաքականության հիմնական տիպերի մասին: Ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսությունում հաջողակ են այն երկրները և մրցունակ՝ այն տնտեսությունները, որոնք կառավարելի են, կանխատեսելի և ոչ ամբողջովին մատնված շուկայի տարերքին: Տնտեսության ազատականացման և պետական կարգավորման, տնտեսության կառավարելիության բաղադրիչների միջև հարաբերակցության այս կամ այն աստիճանն էլ հենց հիմք է դառնում բնութագրելու երկիրը որպես առավել ազատական կամ կարգավորվող, ինչպես նաև երկրի տնտեսական կուրսը: Իրականում ավելի ու ավելի հաճախ է առիթ լինում խոսելու ոչ այնքան ազատ առևտրի, որքան վերջինիս համար արդար պայմանների ձևավորման և դրանց ապահովման մասին: Տնտեսությունների փոխկախվածության և փոխկապվածության պայմաններում ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի Կառավարությունը հարկադրված է ընտրություն կատարելու, հիմնականում, մոտեցումների, տնտեսական քաղաքականությունների երկու գլխավոր տեսակներից՝ հակազդող, արձագանքող (re-active) և նախաձեռնող, նախահարձակ (pro-active): Շուկայական տնտեսության ամենակատարյալ մոդելի դեպքում անգամ հնարավոր չէ լիովին պատրաստ լինել այն փոփոխություններին, որոնք պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդակներով:

Շարունակաբար տեղի են ունենում գործընթացներ, որոնք անմիջական կամ անուղղակի ազդեցություն են թողնում տնտեսության զարգացման վրա: Արդյունքում՝ պետությունը որոնում է ուղիներ՝ հակազդելու տարաբնույթ երևույթներին, մեկուսացնելու կամ վնասազերծելու այս կամ այն աստիճանի հասնող տնտեսական սպառնալիքները, դուրս բերելու երկիրը ճգնաժամային իրավիճակից: Այս ամենը բնութագրվում է որպես տեղի ունեցածին արձագանքելու, գոյություն ունեցող հնարավորություններով երևույթներին հակազ-

[4] ՀՀ Սահմանադրություն, հոդված 11. Տնտեսական կարգը. http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510

դելու քաղաքականություն: Ըստ որում, երևույթների ի հայտ գալը կամ ճգնաժամային ախտանիշների առաջացումը կարող է լինել ինչպես բնականոն զարգացման արդյունք, այնպես էլ հրահրված՝ մրցակից երկրների կամ երկրների խմբերի կողմից: Հետևաբար՝ որքան ժամանակ և ռեսուրսներ են ծախսվում «ճգնաժամեր հրահրելուն», այնքան էլ, եթե ոչ ավելի, պահանջվում է դեպի տնտեսական աշխուժացման փուլ երկիրն ուղղորդելու համար: Ժամանակակից պայմաններում հակազդող քաղաքականությունը բնորոշ է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրների գերակշռող մեծամասնությանը: Ուստի՝ մենք չեն բերի ասվածը ապացուցելու օրինակներ. դրանք գրեթե համատարած են: Հաճախ ճգնաժամային երևույթները հաղթահարելու համար տարբեր, հատկապես՝ զարգացած երկրների կառավարությունները միավորում են իրենց ջանքերը, մշակում և իրականացնում հակազդման համադրված միջոցառումներ, քայլեր: Մյուս կողմից՝ փոքրաթիվ երկրներ կարող են բնութագրվել որպես նախաձեռնող, նախահարձակ տնտեսական քաղաքականության կողմնակիցներ: Դրանցից առավել հաջողված օրինակներ են Ճապոնիան և Գերմանիան: Եթե Գերմանիան հարկադրված է գործելու գերինտեգրված Եվրոպայի խաղի ընդհանուր կանոններով և համեմատաբար քիչ ինքնուրույնություն պահպանել սեփական քայլերը հաշվարկելու, տնտեսական «սցենարներ» մշակելու նպատակով, ապա Ճապոնիայի տնտեսության նկատելի հզորացումը, առաջին հերթին, պայմանավորված է մի կողմից՝ երկրի կառավարության հովանավորչական, մյուս կողմից՝ նախահարձակ տնտեսական քաղաքականությամբ[5]: Մինչ ամերիկացիների շրջանում ավելանում է դժգոհությունը՝ կապված ԱՄՆ-ի տնտեսության առանցքային ճյուղերում կառավարման լծակների աստիճանական կորստյան հետ, որն արտահայտվում է, հիմնականում, եվրոպական և ճապոնական ընկերությունների կողմից առավել շահութաբեր ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերման, դրանց զանգվածային առք ու վաճառքի հետ, ինչպես նաև բազմաթիվ ամերիկյան ընկերությունների արտադրությունը Չինաստան տեղափոխման առնչությամբ, ԱՄՆ-ի կառավարությունը, կարելի է ասել, բավարարված է այլ երկրներում ամերիկյան ընկերությունների տնտեսական հաջողություններով: Վերջինս դիտվում է որպես փոխհատուցում երկրի ներսում գործարար ազդեցությունների վերաբաշխման: Այդ ընթացքում համաշխարհային տնտեսության կենտրոններից մեկը՝ Ճապոնիան, շարունակում է իր հաղթարշավը՝ շնորհիվ համաշխարհային տնտեսության ներսում նկատվող գլխավոր միտումների ճիշտ գնահատման, դրանց հետագա ընթացքի վերաբերյալ նպատակային կանխատեսումների, որոնք, իրենց հերթին, հիմք են ծառայում տնտեսական նոր ծրագրերի մշակման և իրականացման համար: Մյուս կողմից՝ Ճապոնիայի կառավարությունն ակտիվորեն աջակցում է տնտեսության գերակա ճյուղերի զարգացմանը, դրանց համար արտաքին նոր շուկաների որոնմանը, արտերկրի ընկերությունների հետ ռազմավարական դաշինքների ստեղծմանը և, որ պակաս կարևոր չէ, հնարավոր մրցակիցների հաջողությունների ուսումնասիրությանը, առևտրային առաքելությունների, գործարար համաժողովների անցկացմանը, առևտրային ցուցահանդեսների կազմակերպմանն ու ակտիվ մասնակցությանն աշխարհի գրեթե բոլոր ծայրերում:

[5] Տե՛ս Japanese Foreign Economic Policy Formation: Explaining the Reactive State, Review by: Kent E. Calder, World Politics, Cambridge university press. Vol. 40, No. 4 (Jul., 1988), էջ 517–541:

Նախահարձակ քաղաքականությունն, այսպիսով, հնարավորություն է ընձեռում ընթացիկ միտումների գնահատմամբ և տնտեսական ճիշտ կանխատեսումներով առավելագույնս իրացնելու երկրի մրցակցային առավելությունները՝ դրանով իսկ շահեկանորեն տարբերվելով տնտեսական քաղաքականության հակազդող, արձագանքող տեսակից: Միաժամանակ, տնտեսության մեջ 8-10% աճն անգամ իրականություն դարձնելու դեպքում չի կարելի ակնկալել ազգային տնտեսության ձևավորում, առավել ևս՝ դրա վերելք: Տնտեսական առաջընթացը հանրապետությունում կարող է ապահովվել միայն արմատական բարեփոխումներով, որակական փոփոխություններով, որոշակի պետական աջակցություն պահանջող լայնածավալ ծրագրերով, որոնք հնարավոր կդարձնեն 20-25%, իսկ առանձին փուլերում նաև՝ 30-35% տնտեսական աճ: Առաջին հայացքից խիստ հավակնոտ այս թվերն ունեն իրական հիմքեր՝ հատկապես հանրապետության տնտեսության մրցակցային գլխավոր առավելությունները ներկայացնող գերակա ոլորտներում: Հակառակ դեպքում, միանիշ թվով արտահայտված տնտեսական աճը չի կարող ելք լինել ստեղծված իրավիճակից, քանի որ, նախ՝ թույլ չի տա արդյունավետ սպասարկել երկրի արտաքին պարտքը, երկրորդ՝ ավելացնել արտահանման կարողությունը և, ի վերջո՝ հասնել կենսամակարդակի նվազագույն, իսկ հետագայում նաև միջին պայմանների ապահովմանը:

Երկրորդ՝ կարևորվում է երկրի ներքին ռեսուրսների հաշվառումը և գնահատումը: Որքան կարևոր է հանրային կարիքների մասնագիտացված դասակարգումը, նույնքան էական են դրանց բավարարման համար առկա ներքին հնարավորությունների մասին ճշմարիտ և ամբողջական տեղեկատվության հավաքումն ու վերլուծությունը: Հատկանշական է, որ վերջին տասնամյակում ներկայացված փոքր կամ մեծ որևէ ծրագրի հիմքում չկան տվյալ ոլորտի կամ ձեռնարկության զարգացմանն անհրաժեշտ ներքին ռեսուրսների մասին քիչ թե շատ հավաստի տվյալներ: Իսկ հավաստի տվյալների հավաքագրումը և ներկայացումը պետական նշանակության աշխատանք է և կարող է իրականացվել միայն պետական ծրագրերի շրջանակներում՝ կրելով շարունակական բնույթ: Հանրապետությունում արդեն գրեթե երեք տասնամյակ է, ինչ չի անցկացվել արտադրական կարողությունների հաշվառում: Որքան էլ խոսվում է սեփականաշնորհման գործընթացի վնասների մասին, այսուհանդերձ, ոչ ոք ստույգ չի կարող նշել, թե երկրի արտադրական կարողության որ մասը փոշիացվեց «մետաղի ջարդոն» անվան տակ արտահանվելով, որ մասը կողոպտվեց, որ մասը մնաց: Իսկ գուցե ինչ-որ մեկն էլ այս տարիներին կարողացավ ավելացնե՞լ արտադրական կարողությունը: Ոչ ոք չի կարող ասվածը հիմնավորել թվերով կամ բերել դրա հակափաստարկները: Առավել բարդանում է իրավիճակն այն առումով, որ արդեն սեփականաշնորհված ձեռնարկությունների տերերին հնարավոր չէ պարտադրել պետական մարմիններին, օրինակ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը ներկայացնել հաշվետվություններ իրենց ունեցվածքի, հիմնական և շրջանառու միջոցների, այլ հոդվածների վերաբերյալ: Իսկ իրականում չնչին փոխհատուցմամբ մասնավորեցվել է երկրի արտադրական կարողության գերակշիռ մասը….[6]

Ոչ հստակ են հաշվառված նաև հանրապետության ֆինանսական ռեսուրսները: Չկա գոնե մոտավոր գնահատական ստվերում մնացած ֆինան-

[6] ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն այս մասին հայտարարել է 1997 թ. հունվարին:

սական ռեսուրսների, իրական խնայողությունների, դրսում պահվող ավանդների և ակնկալվող հնարավորությունների վերաբերյալ: Չկա երկրի ընդերքի՝ երեսուն տարուց ավելի թարմ գնահատական: Շահագործվող բազմաթիվ հանքերի մասին տվյալները դեռևս մասնագիտական սուր բանավեճերի առարկա են[7]: «Սակավ բնական ռեսուրսներ» ասելով մինչ օրս չգիտենք, թե որ հանածոյից ինչքան է սակավ կամ ավելի: Ավելին՝ պատկերացում չունենք մարդկային ռեսուրսների վերաբերյալ: Անկախության տարիներին անցկացված մարդահամարների[8] կազմակերպիչներին այդպես էլ չհետաքրքրեց, թե ոչ հեռու անցյալում հպարտության առարկա դարձած որակյալ աշխատուժի առումով ինչ տեղաշարժ կա երկրում: Մինչդեռ, ի թիվս որոշ պակաս էական հարցերի, կարելի էր ձևակերպել նաև հաշվառվողի մասնագիտության կամ մասնագիտական որակավորման մասին հարցը, որը մեզ կօգներ կողմնորոշվելու, թե կեղեքիչ արտագաղթի պատճառով, այնուամենայնիվ, հանրապետությունում քանի պիտանի մասնագետ է մնացել, ինչ տարիքի և որ ոլորտներում: Նոր մարդահամարի ժամանակ[9] շրջանցել այս հարցերը չի կարելի, քանզի, առանց ստույգ տվյալների, ընթացիկ կամ հեռանկարային ցանկացած տնտեսական ծրագիր կարող է վերածվել բարի ցանկությունների փաթեթի և ինքնախաբեության փորձի: Վերջապես, առանց ներքին՝ մարդկային, բնական, նյութական, ֆինանսական և արտադրական ռեսուրսների բացահայտման հնարավոր չէ հիմնավորել, թե հատկապես որ արտադրությունն է ավելի եկամտաբեր կազմակերպել Հայաստանում, որ ոլորտը կարող է հիմնվել տեղական հումքի, բնական, ֆինանսական, մասնագիտական ներուժի վրա և ինչ չափերով:

Երրորդ՝ Հայաստանի տնտեսական առաջընթացը, մեր համոզմամբ, պայմանավորված է ոչ միայն հանրապետության, այլև մերձավոր և հեռավոր Սփյուռքի, Արցախի հայության համեմատական և բացարձակ առավելությունների, այլ խոսքով՝ որոշակի չափանիշներով ազգային մրցակցային առավելությունների ճիշտ ընտրությամբ, ինչպես նաև ներքին և արտաքին շուկաներում դրանց արդյունավետ իրացման ուղղությամբ նպատակային տնտեսական քաղաքականության իրականացմամբ: Սահմանափակ ռեսուրսների պայմաններում վերարժևորելով մտավոր կարողության՝ որպես ազգային հարստության մի կարևոր բաղկացուցչի դերը, նպատակահարմար է, ընդհանուր առմամբ, արդյունաբերության և ծառայությունների գիտատար, քիչ նյութատար ճյուղերի և ենթաճյուղերի արագընթաց զարգացումը: Մի հանգամանք, որն առնվազն տարածաշրջանում կարող է առաջատար դեր ապահովել երկրի տնտեսությանը՝ հաշվի առնելով հատկապես գիտատար ոլորտների (ներառյալ՝ համակարգչային ծրագրավորման, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, միջուկային ֆիզիկայի, քիմիայի, կենսաքիմիայի, կենսատեխնոլոգիայի, ճշգրիտ սարքաշինության, մեքենաշինության, բարձր տեխնոլոգիաների և այլ բնագավառների)՝ մինչ օրս ոչ լիարժեք օգտագործ-

[7] Ամուլսարի հանքի շահագործման տնտեսական և էկոլոգիական հետևանքները. http://hetq.am/arm/news/84915/amulsari-hanqi-shahagortsman-tntesakan-ev-ekologiakanhetevanqnery.html

[8] Հայաստանում 1991-ից ի վեր անցկացվել է երկու մարդահամար՝ 2001 և 2011 թվականներին. https://www.aniarc.am/2018/09/06/armenia-population1926-2014/

[9] Հայաստանում հերթական մարդահամարը կանցկացվի 2020 թվականին. https://www.aysor.am/am/news/2018/10/10/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80/1475962

ված կարողությունը: Եվ այս ամենը, անշուշտ, ներդաշնակելով գիտության և տեխնոլոգիաների, տնտեսության և գործարարության ոլորտներում նկատվող նոր զարգացումներին, ճիշտ հաշվարկելով ակամա մրցակիցների քայլերը, որոնելով ճիշտ գործընկերներ, ձևավորելով ռազմավարական միություններ ընդհանուր շահեր հետապնդող երկրների և ընկերությունների հետ:

Չորրորդ՝ ազգային մրցակցային առավելությունների իրացմանն ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, ռազմավարական գործընկերների ճիշտ ընտրությունը և ներդրումային աշխուժությունն ուղղակիորեն կախված են վստահության մթնոլորտի գոյությունից, որն արդյունք է օրենքի գերակայության, բոլորի կողմից որոշումների և պահանջների պարտադիր կատարման, փոքր ու մեծ տնտեսավարող կառույցների համար արդար ձեռներեցության պայմանների ապահովման: Սա, բնականաբար, հնարավոր է իշխանության ու ժողովրդի միջև ձևավորված անջրպետի վերացման և պետական կառավարմանը ժողովրդի մասնակցության ապահովման դեպքում, որն ավելի պարզ ձևակերպվում է որպես «ժողովրդավարության կայացում»: Այս պայմաններում հնարավոր է ակնկալել նաև ազգային համախառն եկամտի քիչ թե շատ համաչափ բաշխում, բևեռացման նվազեցում, ստվերային տնտեսության կրճատում, միջին խավի ձևավորում, սոցիալական արդարության սկզբունքների համատարած կիրառում և առանց կողմնակալության ու ներազգային խտրականության՝ արտերկրի հայերի մասնագիտական կարողության, գործարար ներուժի մասնակցության առավելագույնս ապահովում Հայաստանի տնտեսական կյանքում:

Արդյունքում կարելի է նաև իրատեսական համարել մոտ ապագայում պետականության կայացումն ու հզորացումը, երկրի տնտեսական անվտանգության[10], ինչպես նաև աշխատանքի դիմաց արդար փոխհատուցման պայմաններով մարդկանց համար արժանի ապրելակերպի գումարելիների մատչելիության ապահովումը:

Այսպիսով՝ հանրապետության տնտեսական զարգացման հայեցակետը հանգում է հետևյալ ձևակերպմանը.

Հայաստանի Հանրապետությունը վարում է զարգացման ազգային-սոցիալական շուկայական տնտեսության մոդելի վրա հիմնված նախահարձակ, հավակնոտ տնտեսական քաղաքականություն՝ միտված ներքին՝ մարդկային, բնական, նյութական, ֆինանսական և արտադրական ռեսուրսների բացահայտմանը և դրանց շնորհիվ ազգային մրցակցային առավելությունների, առաջին հերթին, տնտեսության գիտատար ճյուղերի ապրանքների և ծառայությունների առավել արդյունավետ իրացմանը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության նոր զարգացումներին ու միտումներին համահունչ՝ ներքին և արտաքին շուկաներում: Նպատակը իրական ժողովրդավարության կայացմամբ, սոցիալական արդարության հաստատմամբ, գործարար ոլորտում վստահության մթնոլորտի ձևավորմամբ, Սփյուռքի և Արցախի հայության մասնագիտական կարողության համակարգված մասնակցությամբ իրավական պետության, ազգաբնակչության արժանավայել կենսապայմանների, տնտեսական լիարժեք անվտանգության ապահովումն է:

---

[10]Տե՛ս **Թ. Մանասերյան,** Տնտեսական անվտանգություն, ռազմավարության ուրվագծեր, ՀՀ ԳԱԱ հրատ., 2014, էջ 138–245:

Օգտագործված գրականություն

1. Թ. Մանասերյան, Տնտեսական անվտանգություն, ռազմավարության ուրվագծեր, ՀՀ ԳԱԱ հրատ., 2014:
2. Մարտահրավերներ գլոբալացմանը, Նորավանք, 19.05.2008:
3. Համաշխարհային տնտեսական ճգնաժամեր (պատճառներ և հետևանքներ). http://www.irates.am/hy/uzrSSFrGYFF3QdTaQiljLrbvSR
4. ՀՀ Սահմանադրություն, հոդված 11. Տնտեսական կարգը. http://www.arlis.am/DocumentView. aspx?docID=102510
5. Japanese Foreign Economic Policy Formation: Explaining the Reactive State, Review by: Kent E. Calder, World Politics, Cambridge university press. Vol. 40, No. 4 (Jul., 1988).
6. Lyudvig Erhard Prosperity for All 1957. 8th Edition: 1964.
7. http://hetq.am/arm/news/84915/amulsari-hanqi-shahagortsman-tntesakan-ev-ekologiakanhetevanqnery.html
8. https://www.aysor.am/am/news/2018/10/10/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80/1475962
9. http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=755
10. https://www.aniarc.am/2018/09/06/armenia-population1926-2014/

ТАТУЛ МАНАСЕРЯН
Доктор экономических наук, профессор

Доктрина экономического развития Республики Армения.– Республика Армения проводит агрессивную, амбициозную экономическую политику, основанную на модели развития национальной социальной рыночной экономики, ориентированной на раскрытие внутренних, человеческих, природных, материальных, финансовых и производственных ресурсов и через них: выявление национальных конкурентных преимуществ, прежде всего, наиболее эффективной реализации товаров и услуг разных отраслей национальной экономики на внутреннем и внешнем рынках в соответствии с новыми тенденциями и развитиями в региональной и мировой экономике с целью установления: верховенства закона, дельной демократии, социальной справедливости, атмосферы доверия в бизнес-секторе, скоординированного участия армян (включая Армению и Диаспору) с их профессиональной деятельностью, достижения достойных условий жизни населения и обеспечения полной экономической безопасности.

Ключевые слова: *доктрина, модель, политика, ресурсы, социальная рыночная экономика.*
JEL: O1, O10, O2

TATUL MANASERYAN
Doctor of Economics, Professor

The Doctrine of Economic Development of the Republic of Armenia.– The Republic of Armenia is pursuing an aggressive, ambitious economic policy based on national social market economy development model, oriented to the discovery of internal – human, natural, material, financial and production resources and to the utilization of, national competitive advantages, first of all, the most effective realization of the products and services from various branches of economy, in line with the new developments and trends in the regional and global economy, in domestic and foreign markets, aimed at the establishment of: the rule of law, the true democracy, social justice, creating an atmosphere of trust in the business sector, as well as coordinated involvement of Armenia's and Diaspora's Armenians in their professional capacity to achieve decent living conditions of the population and to ensure full economic security.

Key words: *doctrine, model, politics, resources, social market economy.*
JEL: O1, O10, O2